

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. _____ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՏԱՐԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.2018թ.պլանավորած աշխատանքներ.

1. Մանկավարժության ֆակուլտետի բակալավրիատի բոլոր մասնագիտությունների՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն», «Հոգեբանություն», «Կերպարվեստ», «Երաժշտական կրթություն», կրթական ծրագրերը, մագիստրատուրայի մասնագիտությունների՝ «Հոգեբանություն», «Կրթության կառավարում», կրթական ծրագրերը պարբերաբար վերանայվել են: Բոլոր կրթական ծրագրերը ներդրված են՝ բացի «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մասնագիտության ՄԿԾ-ն, որը առաջիկայում կներդրվի հեռակա համակարգի տվյալ բաժնի ընդունելությունից հետո:

2. Ընթացիկ տարում հենակետային ամբիոնների դասախոսները մասնակցել են շարունակական կրթության վերապատրաստման դասընթացներին, այսպես՝ հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնից՝ Հ. Ավագիմյան (իրավագիտություն), Զ. Գրիգորյան (ներառական կրթություն, անգլերեն), Մ.Ղարաքեշիշյան (անգլերեն), Տ. Մալումյան (ինֆորմատիկա), մանկավարժության ամբիոնից՝ Ն. Ներկարարյան, Ա. Հովհաննիսյան (ներառական կրթություն), արվեստի ամբիոնից՝ Հ. Հակոբյան, Թ. Մելիքյան, Ռ. Ամիրբեկյան, Ս. Հարությունյան, Ն. Պապանյան, Գ. Մինասյան, Ա. Հովհաննիսյան (իրավագիտություն, օտար լեզու), Հ. Չատինյան (ինֆորմատիկա):

3. Ամբիոնների մասնագիտացման ուղղությունների շրջանակներում գիտական և կիրառական հետազոտությունների զարգացում:

4. Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը համապատասխանեցվել է թողարկվող ամբիոնների պլանային գիտական աշխատանքներին: Մանկավարժության ամբիոնում գործում են 3 գիտական խմբեր, որտեղ ընդգրկված են նաև ուսանողներ:

5. Կազմակերպվել է ՈԻԳԸ-ի ուսանողական գիտական կոնֆերանս (20.03.2018թ.), հանրապետական ուսանողական գիտաժողով (06.11.2018թ.)՝ ֆակուլտետի մասնագիտությունների ժամանակակից հիմնախնդիրների թեմաներով (տե՛ս հավելվածը):

Մանկավարժության ամբիոնից ՈԻԳԸ-ի աշխատանքներ են ներկայացրել 9 ուսանողներ, հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնից՝ 22 ուսանողներ, արվեստի ամբիոնից՝ 4 ցուցահանդես, 2 համերգային ելույթ (տե՛ս՝ հավելված 3):

6. Արտաքին շահառուներ՝ 21 մասնակից ընդգրկվել են ավարտական որակավորման քննությունների հանձնաժողովներում:

7. Խորհրդատվական աշխատանքներ կուրսերում՝ ուսանողների դաստիարակության հետ կապված հարցերի քննարկում (բարոյական, գեղագիտական, հայրենասիրական...), ուսանողների կրթական կարիքների վերհանում և դրանց լուծման ուղիների մշակում:

8. Մանկավարժության ֆակուլտետի հոգեբանության, մանկավարժության և արվեստի ամբիոնները 2018թ. բուհ-դպրոց կապերի շրջանակներում կատարել են հետևյալ աշխատանքները.

2018թ. ապրիլին բուհ-դպրոց կապերի շրջանակներում ՎՊՀ –ում անցկացվեց Լոռու մարզի դպրոցների հոգեբանների սեմինար «Դպրոցականների սոցիալ-հոգեբանական զարգացման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով:

Սեմինար պարապմունքին մասնակցեցին Լոռու մարզի դպրոցների թվով 33 հոգեբաններ: Սեմինարը վարում էին համալսարանի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Զարուհի Գրիգորյանը և դասախոս Նունե Հովսեփյանը:

2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բարձր դասարանների աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներին մասնակցել են ֆակուլտետի առաջադեմ ուսանողները և դասախոսները՝ Սեդա Բեժանյանը, Քարմիլե Վիրաբյանը, Մարիաննա Մազմանյանը, Աննա Հովհաննիսյանը, «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 3-րդ կուրսից Զարինե Գրիգորյանը, մագիստրատուրայի «Հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրսից Լիլիթ Վերանյանը:

2018թ. ապրիլին անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադա «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից, մասնակցել են թվով 14 աշակերտներ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են արվեստի ամբիոնի վարիչ Հայկուհի Հակոբյանը և դասախոսներ Գոհար Մինասյանը, Սերգեյ Հարությունյանը, Ռոբերտ Հեքիմյանը, Համլետ Չատինյանը, Աննա Հովհաննիսյանը:

Արվեստի ամբիոնի դասախոս Աննա Հովհաննիսյանը վարել է «Կերպարվեստ» առարկայի 2018թ. ընդունելության նախապատրաստական դասընթացը: Դասընթացի բոլոր մասնակիցները ընդունվել են համալսարան, այդ թվում երկուսը՝ անվճար ուսուցման համակարգ, 4-ը՝ վճարովի ուսուցման համակարգ:

9. «Ֆակուլտետի օր» միջոցառման շրջանակներում 2018 թ. մարտի 14-21-ը անցկացվել է «Բաց դռների օր», իսկ ֆակուլտետի օրվան նվիրված տոնակատարությունը տեղի է ունեցել մարտի 21-ին:

10. Ուսանողների հոգեբանական խորհրդատվության անցկացում (հիմք՝ խորհրդատվական կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը):

11. Շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցում ֆակուլտետը ունի պասսիվ դեր, բայց անհրաժեշտության դեպքում տրամադրվում է վերաորակավորման ուղիների վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն:

12. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում:

Շրջանավարտների մեթոդական աջակցության ցուցաբերման նպատակով անց են կացվել սեմինարներ «Ուսումնամեթոդական սեմինար Լոռվա մարզի դպրոցների հոգեբանների հետ դպրոցականների տարբեր հոգեբանական խնդիրների վերլուծության ուղղությամբ», «Ռիսկի խմբի աշակերտների դաստիարակության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմաներով:

13. Շրջանավարտներին մեթոդական աջակցության ցուցաբերում

ՆՊԱՏԱԿ 1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	
1.1.	2017-2018 ուստարում մանկավարժության ֆակուլտետը հավատարիմ է մնացել իր որդեգրած նպատակին՝ մանկավարժության, հոգեբանության, սոցիալական մանկավարժության, կեր-

	<p>պարվեստի, երաժշտական կրթության (բակալավրի), «Հոգեբանության», «Կրթության կառավարում» (մագիստրոսի) կոմպետենտ մասնագետների պատրաստում, որը կբավարարի աշխատաշուկայի պահանջները, հյուսիսային տարածաշրջանում կապահովի կայուն զարգացում, կմատուցի կրթական ծրագրեր հիշյալ մասնագիտություններով և կդառնա գիտական հետազոտություններ իրականացնող համալսարանական ստորաբաժանում:</p> <p>Ֆակուլտետը շարունակում է իր գործունեությունն իրականացնել շահառու կողմերի կարիքների և իր որդեգրած քաղաքականության հիմնադրամբ:</p> <p>Մանկավարժության ֆակուլտետը, առաջնորդվելով ՎՊՀ-ի զարգացման հայեցակարգով (2014-2018), ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր:</p>	
1.2.	<p>Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում և վերանայում:</p> <p>ՄԿԾ-ում առկա է դասավանդվող բոլոր առարկաների ԱՌԻՄՓ-ները, որտեղ ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները և ուսումնական պլանի քար-</p>	<p>Մրցունակ, արհեստավարժ մասնագետների պատրաստում:</p> <p>Կրեդիտային համակարգի կատարելագործում և շարժունության ակտիվացում, կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի զարգացում, տարբեր միջազգային ծրագրերին մասնակցություն:</p>

	տեգր:	
1.3.	Ուսուցման բոլոր ձևերում (առկա, հեռակա) դասախոսությունների, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների, մասնագետների որակավորման բարձրացման աշխատանքների անցկացում:	Մրցունակ, արհեստավարժ մասնագետների պատրաստում:
1.4.	Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպում, ուսանողների կուրսային և ինքնուրույն աշխատանքների կազմակերպում և ղեկավարում:	Մանկավարժական որոշակի փորձի ձեռք բերում, մասնագիտական գիտելիքները պրակտիկ աշխատանքում օգտագործելու հնարավորություն:
1.5.	Ուսանողների ընթացիկ առաջադիմության ատեստավորում և քննաշրջանների ստուգաթղթերի ու քննությունների կազմակերպման բարելավում:	Գիտելիքների ստուգում:
1.6.	Ամբիոնի ներկայացուցիչների միջոցով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման, պաշտպանության կազմակերպում և անցկացման բարելավում:	Գիտելիքների ստուգում:
1.7.	Ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների ուսումնական ծրագրերի, բոլոր տիպի ուսումնական հանձնարարությունների, ուսումնական պլանների՝ պետական չափորոշիչներին համապատասխան մշակում:	Կոմպետենտ մասնագետների պատրաստում:
1.8.	Ամբիոնի աշխատակիցների կրթական, գիտական, մեթոդական և այլ աշխատանքների անհատական պլանների քննարկում, աշխատանքային պլանների բարելավում:	Դասախոսների կրթական, գիտական, ստեղծագործական աճի խթանում:
1.9.	Դասալսումների և դասախոս-	Դասախոսների կրթական, գիտական,

	սական տեքստերի քննարկում: Ամբիոնի լավագույն դասախոսների աշխատանքային փորձի ուսումնասիրությունը, ձեռքբերումների ընդհանրացումն ու տարածումը:	ստեղծագործական աճի խթանում: Օգնությունը սկսնակ դասախոսներին մանկավարժական վարպետության հմտությունների յուրացման գործում:
1.10	Համալսարանում կազմակերպվող միջոցառումներին և լրացուցիչ ծառայություններին մասնակցություն:	Համալսարանում կազմակերպվող միջոցառումներին դասախոսների և ուսանողների ներգրավում:
1.11	Մասնագիտական գիտելիքների քարոզչության և լուսավորչական գործունեության ծավալում հասարակության մեջ:	Մասնագիտության դերի բարձրացում հասարակության մեջ:
1.12	Գնահատման համակարգի կատարելագործում	
1.13	ՆՊԱՏԱԿ2. Սոցիալ-դաստիարակ-չական աշխատանքներ Հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակում:	<i>Շահառուներին, հասարակությանը նոր կրթական ծրագրերի մատուցում:</i> ՄԿԾ-ներում շահառու կազմակերպությունների ընդգրկում (հենակետային դպրոցներ, խնամքի կենտրոն, մանկատուն, ծերանոց, ներառական դպրոցներ): Շահառուների ներկայացուցիչների մասնակցություն ավարտական ամփոփիչ քննություններին:
1.14	Նպատակ3. Գիտահետազոտական Թողարկող ամբիոնների հատուկ մասնագիտական առարկաների ուղղություններով տարվող գիտահետազոտական ուսումնասիրությունների առաջնայնության ամրագրում:	<i>Բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում:</i> 1. Քամայյան Շուշան, -«Հանրակրթական դպրոցի կառավարման արդի հիմնախնդիրները», դեկ. 1. Հարոյան /մ/մ2-րդ/ 2. Հակոբջանյան Ջավահիր «Ուսման մեջ ետ մնացող և չառաջադիմող երեխաների պատճառները և դրանց շտկումը»,

		<p>դեկ.՝ Ա. Հովհաննիսյան /սոց.մանկ. 2-րդ/ 3. Տոնոյան Տաթև - «Գործարար էթիկայի մշակման և կիրառման հիմնախնդիրների վերլուծությունը ՎՊՀ-ում», դեկ.՝ Է. Նասիլյան /կրթ. կառ., /մագ./ 2-րդ/ 4. Խումարյան Լիլիթ - «Կրտսեր դպրոցականի բարոյական արժեքների ձևավորման գործում ժողովրդական ավանդույթների դերը», դեկ.՝ Լ. Հարոյան /մ/մ2-րդ/ 5. Գալստյան Հասմիկ- «Թումանյանի մանկական ստեղծագործությունների դաստիարակչական արժեքը», դեկ.՝ Լ.Հարոյան /մ/մ2-րդ/ 6. Գրիգորյան Զարինե -«Կրտսեր դպրոցականներին բնորոշ վախերը», դեկ.՝ Ք.Վիրաբյան /սոց.մանկ. 2-րդ/ 7. Մաթոսյան Դիանա - «Պերֆեկցիոնիզմը որպես հոգեբանական երևույթ», դեկ՝ Վ. Միրզոյան /հոգեբ. / 3-րդ 8. Հարությունյան Ա., Հովհաննիսյան Ա, Մկրտչյան Ա., Ներկարարյան Ն., Տաթև Սահակյան /սոց.մանկ. 3-րդ/, «Պրակտիկայի ազդեցությունը ուսանողների մասնագիտական ադապտացիայի և աշխատանքային գործունեության վրա», «Մխիթար Գոշ» Գիտական հոդվածներ, Վանաձոր,2017/2 (47)</p>
1.15	<p>Նպատակ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ Աջակցել ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանը:</p>	<p>Ուսանողներին ընդգրկել ՎՊՀ և ֆակուլտետների ԳԽ-ներում, ՈԱ մշտական հանձնաժողովներում՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ:</p>
1.16	<p>Նպատակ 5. Արտաքին կապեր և միջազգայնացում Համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում արտասահմանյան բարձրագույն կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:</p>	<p>Ուսանողների փոխանակման ծրագրերի մշակում:</p>
1.17	<p>Նպատակ 6.Կառավարման համակարգի</p>	

	կատարելագործում 6.1 Մարդկային ռեսուրսների մասնագիտական մակարդակի բարձրացման շարունակական ապահովում:	
1.18	Նպատակ 7. Կարերիայի և շրջանավարտների աջակցություն Շրջանավարտների հետ համատեղ հոդվածների հրատարակում, մեթոդական սեմինարների անցկացում:	
1.19	Նպատակ 8. Հասարկության հետ կապերի զարգացման ռազմավարություն հանրությանը մշտապես իրազեկել մանկավարժության ամբիոնում կազմակերպվող կրթական, գիտական և մշակութային գործընթացների մասին, մանկավարժի մասնագիտության զուլազդ:	Ապահովել շահառուների հետ փոխադարձ կապը:

2. 2018 թ. կատարված աշխատանքներն ըստ սահմանված նպատակների և խնդիրների:

1. Կատարված աշխատանքներն ըստ պլանավորման՝ կարևորելով աշխատանքի արդյունքը, ցուցանիշները, որակական և քանակական ձեռքբերումները:

2. Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում և վերանայում:

3. Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպում, ուսանողների կուրսային և ինքնուրույն աշխատանքների կազմակերպում և ղեկավարում:

4. Ուսանողների ընթացիկ առաջադիմության ատեստավորում և քննաշրջանների ստուգարքների ու քննությունների կազմակերպման բարելավում:

5. Ամբիոնների ներկայացուցիչների միջոցով ավարտական աշխատանքների ղեկավարման, պաշտպանության անցկացման կազմակերպման բարելավում:

6. Ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների ուսումնական ծրագրերի, բոլոր տիպի ուսումնական հանձնարարությունների, ուսումնական պլանների մշակում՝ պետական չափորոշիչներին համապատասխան:

7. Ամբիոնների աշխատակիցների կրթական, գիտական, մեթոդական և այլ աշխատանքների անհատական պլանների քննարկում:

8. Դասալսումների և դասախոսական տեքստերի քննարկում:

9. Ամբիոնների լավագույն դասախոսների աշխատանքային փորձի ուսումնասիրությունը, ձեռքբերումների ընդհանրացումն ու տարածումը, օգնությունը սկսնակ դասախոսներին մանկավարժական վարպետության հմտությունների յուրացման գործում:

10. Ամբիոնների անդամների ուսումնական և մեթոդական անհատական աշխատանքների աշխատանքային պլանների բարելավում:

11. Համալսարանում կազմակերպվող միջոցառումներին և լրացուցիչ ծառայություններին մասնակցություն:

12. Մասնագիտական գիտելիքների քարոզչության և լուսավորչական գործունեության ծավալում հասարակության մեջ:

13. Ամբիոնների գիտական և ստեղծագործական ուղղվածության աշխատանքների կազմակերպում և արդյունքների ամփոփում:

14. Ուսանողների ստեղծագործական և գիտական աշխատանքների ղեկավարում:

15. Օգնություն ՈԻԳԸ խորհրդին գիտաժողովների և միջոցառումների կազմակերպման գործում:

16. Միջբուհական, մարզային, բուհական փառատոների և ցուցահանդեսների կազմակերպում:

17. Հայրենասիրության, մարդասիրության որակների դաստիարակումը թեմատիկ ցուցահանդեսների, համերգների միջոցով:

18. Աջակցել մասնագիտական կրթությունը որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացին:

19. Աջակցել համալսարանի կրթական ծրագրերի հավատարմագրմանը:

20. Աշխատաշուկային անհրաժեշտ որակյալ կրթությամբ մասնագետների պատրաստում:

21. Շրջանավարտների հետ կապի ապահովում:

22. 2018թ. բոլոր գիտական հրապարակումների թիվը՝ ըստ թողարկող ամբիոնների դասախոսների:

Գիտական հրապարակումներ

Մանկավարժության ամբիոն- 2018 թ. - 6

Հոգեբանության և սոց. ամբիոն- 2018թ. - 6

Արվեստի ամբիոն - 2018 թ. – 5 ցուցահանդես, 3 համերգային ելույթ

23. 2018 թվականի ՈԻԳԸ-ի աշխատանքների թիվը՝ ըստ մասնագիտությունների:

Մանկավարժության ամբիոն- 2018 թ.- 9 (տե՛ս մանկավարժության ամբիոնի և ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահի հաշվետվությունները)

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն-2018թ. - 22 (տե՛ս հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի հաշվետվությունը)

Արվեստի ամբիոն - արվեստի ամբիոնից՝ 4 ցուցահանդես, 3 համերգային ելույթ (տե՛ս արվեստի ամբիոնի հաշվետվությունը)

24. 2018թ. հենակետային ամբիոնների դասախոսները մասնակցել են շարունակական կրթության վերապատրաստման դասընթացներին, այսպես՝ հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնից՝ Հ. Ավագիմյան (իրավագիտություն), Զ. Գրիգորյան (ներառական կրթություն, անգլերեն), Մ.Ղարաքեշիշյան (անգլերեն), Տ. Մալումյան (ինֆորմատիկա), մանկավարժության ամբիոնից՝ Ն. Ներկարարյան, Ա. Հովհաննիսյան (ներառական կրթություն), արվեստի ամբիոնից՝ Հ. Հակոբյան, Թ. Մելիքյան, Ռ. Ամիրբեկյան, Ս. Հարությունյան, Ն. Պապանյան, Գ. Մինասյան, Ա. Հովհաննիսյան (իրավագիտություն, օտար լեզու), Հ. Չատինյան (ինֆորմատիկա):

25. 2018 թվականի առկա և հեռակա համակարգերի որակավորման ավարտական աշխատանքներ՝ ըստ ամբիոնների

Մանկավարժության ամբիոն - 58

Հայոց լեզվի ամբիոն – 25

Մաթեմատիկայի ամբիոն – 4

Հոգեբանության և սոց. ամբիոն-2017-2018 ուստարի – 40

Արվեստի ամբիոն - 2017-2018 ուստարի – 2

26. Արտաքին շահառուներ՝ 21 մասնակից ընդգրկվել են ավարտական որակավորման քննությունների հանձնաժողովներում.

1.Նազելի Ավետիսյան- բ.գ.թ., դոցենտ, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն

2.Մելս Մկրտումյան - հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի պրոֆեսոր

3.Ամալյա Ոսկանյան - Վանաձորի թիվ 1 դպրոցի դասվար

4.Վարսենիկ Հախվերդյան - Վանաձորի թիվ 2 դպրոցի դասվար

5.Թամարա Ֆարմանյան – Վանաձորի թիվ 3 դպրոցի դասվար

6.Ժանետա Մոսինյան - Վանաձորի թիվ 12 դպրոցի դասվար

7.Հասմիկ Ներկարարյան – Վանաձորի խնամքի կենտրոնի տնօրեն

8.Վարդուհի Կիրակոսյան - Վանաձորի թիվ 16 դպրոցի ուսուցչի օգնական

9. Աննա Ասլանյան-Վանաձորի թիվ 25 դպրոցի սոցիալական մանկավարժ

10.Նարե Հովհաննիսյան – Վանաձորի թիվ 16 դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ

11. Սարգիս Ղարիբյան – քանդակագործ, Վանաձորի Մ. Շահումյանի անվան թիվ 6 դպրոցի «Կերպարվեստի» ուսուցիչ

12.Տիգրան Հարությունյան - գեղանկարիչ, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի դասախոս, Վանաձորի դրամատիկական թատրոնի նկարիչ

13. Յուրի Աբուլյան - գեղանկարիչ, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի կերպարվեստի դասախոս

14. Քրիստինե Ասլանյան - գեղանկարիչ, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի կերպարվեստի դասախոս

15. Մարինե Դավթյան – Վանաձորի մանկատան տնօրեն

16. Հասմիկ Ներկարարյան – Վանաձորի խնամքի կենտրոնի տնօրեն

17. Անահիտ Խլղաթյան – Վանաձորի թիվ 4 դպրոցի սոց. մանկավարժ

18. Գագիկ Աղաբաբյան – Վանաձորի թիվ 1 երաժշտական դպրոցի տնօրեն:

19. Լամարա Գևորգյան - Վանաձորի թիվ 2 երաժշտական դպրոցի

դաշնամուրային բաժնի վարիչ

20. Լեյլի Ավետիսյան – Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի ուսուցչուհի

21. Նարինե Հակոբյան- Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի վարիչ

27. Մանկավարժության ֆակուլտետի հոգեբանության, մանկավարժության և արվեստի ամբիոնները 2018թ. բուհ-դպրոց կապերի շրջանակներում կատարել են հետևյալ աշխատանքները.

ա/ 2018թ. ապրիլին բուհ-դպրոց կապերի շրջանակներում ՎՊՀ –ում անցկացվեց Լոռու մարզի դպրոցների հոգեբանների սեմինար «Դպրոցականների սոցիալ-հոգեբանական զարգացման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով:

Սեմինար պարապմունքին մասնակցեցին Լոռու մարզի դպրոցների թվով 33 հոգեբաններ: Սեմինարը վարում էին համալսարանի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Զարուհի Գրիգորյանը և դասախոս Նունե Հովսեփյանը:

բ/ 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բարձր դասարանների աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներին մասնակցել են ֆակուլտետի առաջադեմ ուսանողները և դասախոսները՝ Սեդա Բեժանյանը, Քարմիլե Վիրաբյանը, Մարիաննա Մազմանյանը, Աննա Հովհաննիսյանը, «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 3-րդ կուրսից Զարինե Գրիգորյանը, մագիստրատուրայի «Հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրսից Լիլիթ Վերանյանը:

գ/ 2018թ. ապրիլին անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադա «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից, մասնակցել են թվով 14 աշակերտներ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են արվեստի ամբիոնի վարիչ

Հայկուհի Հակոբյանը և դասախոսներ Գոհար Մինասյանը, Սերգեյ Հարությունյանը, Ռոբերտ Հեքիմյանը, Համլետ Չատինյանը, Աննա Հովհաննիսյանը:

դ/ Արվեստի ամբիոնի դասախոս Աննա Հովհաննիսյանը վարել է «Կերպարվեստ» առարկայի 2018թ. ընդունելության նախապատրաստական դասընթացը: Դասընթացի բոլոր մասնակիցները ընդունվել են համալսարան, այդ թվում երկուսը՝ անվճար ուսուցման համակարգ, 4-ը՝ վճարովի ուսուցման համակարգ:

28. Չառաջադիմող ուսանողների հետ անհատական խորհրդատվական աշխատանքների իրականացում:

29. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների հետ:

Այցելություններ են կատարվել Վանաձորի թիվ 5, 10, 13, 17, ավագ դպրոցներ և թիվ 9, 16, 22, 27, 30 հիմնական դպրոցներ, ՎՊՀ հենակետային վարժարան, Սպիտակի ավագ դպրոց, Սարամեջի միջն. դպրոց, Ալավերդու թ. 8 ավագ դպրոց, Օձունի թ.1 միջն. դպրոց, Տաշիրի ավագ դպրոց, Մեծավանի թ. 2 միջն. դպրոց, Ստեփանավանի ավագ դպրոց, Ստեփանավանի թ. 6 միջն. դպրոց, Գուգարքի ավագ դպրոց, Շահումյանի միջն. դպրոց: Կազմակերպվել է նաև «Բաց դռների օր» (երկու անգամ): Մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ անցկացնող խմբերի կազմում ակտիվ մասնակցություն են ունենում նաև ֆակուլտետի դասախոսներ Սեդա Բեժանյանը, Քարմիլե Վիրաբյանը, Մարիանա Մազմանյանը, Նունե Հովսեփյանը, Հայկ Ավագիմյանը, Արմեն Հարությունյանը, ուսանողներ Աստղիկ Օհանյանը, Սոնա Վարոսյանը:

30. Ուսանողների հոգեբանական խորհրդատվության անցկացում:
Հունվարից հունիս ամիսներին հոգեբանական խորհրդատվության կենտրոն այցելել են բազմաթիվ ուսանողներ, խորհրդատվական աշխատանքներ են իրականացրել հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 10 դասախոսներ (տե՛ս ամբիոնի հաշվետվության 7.6 կետը):

Առաջին կուրսերում ուսանողների ադապտացիոն խորհրդատվական աշխատանքներ են անցկացրել Լ. Հարոյանը՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 1-ին, Մ. Մազմանյանը՝ «Հոգեբանություն» 1-ին, Ա. Հարությունյանը՝

«Սոցիալական մանկավարժություն» 1-ին, Թ. Մելիքյանը՝ «Երաժշտական կրթություն» 1-ին :

Ուսանողները կենտրոն են դիմել հետևյալ խնդիրներով.

- վախ մահից
- խնդիրներ ծնողների հետ փոխհարաբերություններում
- խնդիրներ դասախոս- ուսանող փոխհարաբերություններում
- հետծննդաբերական դեպրեսիա
- ազդեցիվություն, տազնապայնություն

Սեպտոմբերից դեկտեմբեր ամիսներին հոգեբանական-խորհրդատվական կենտրոնի գործունեության վերաբերյալ իրազեկվել են բոլոր ֆակուլտետների ուսանողները (հատկապես առաջին կուրսեցիները) և վարչարանի ու քոլեջի սովորողները: Մոնիթորինգ է իրականացվել՝ պարզելու, վեր հանելու ուսանողներին հուզող խնդիրները՝ ուսումնական սթրեսների, առաջադիմությանը խանգարող գործոնների, կոնֆլիկտների վերաբերյալ:

Ուսանողների հետ անց է կացվել “Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկա”, որի նպատակն է եղել բացահայտել ուսանողների հաղորդակցման ունակություններն ու դիրքորոշումները, դժվարություններն ու հիմնախնդիրները: Հաղորդակցման դժվարություններ ունեցող ուսանողները ստացել են անհատական խորհրդատվություն:

2018 թ-ի ապրիլի 27-ին դպրոցների հոգեբանների հետ կազմակերպվել է սեմինար «Ժամանակակից դպրոցներում սոցիալ- հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով: Սեմինարի ընթացքում քննարկվել են հիմնականում հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքների սկզբունքները: Զեկուցումով հանդես են եկել հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոսներ՝ Զ.Գրիգորյանը և Մ. Մազմանյանը:

Անհատական խորհրդատվություն ստանալու նպատակով կենտրոն են դիմել 11 ուսանող և երկու խմբային խորհրդատվություն: Յուրաքանչյուր ուսանող խորհրդատվական աջակցություն է ստացել 3-5 անգամ: Ուսանողները կենտրոն են դիմել տարաբնույթ խնդիրներով: Դրանք վերաբերել են ներանձնային կոնֆլիկտներին, վախերին և տազնապայններին, քննական սթրեսներին, սոցիալական

անհարմարվողականությանը, միջանձնային կոնֆլիկտներին և այլն: Ուսանողների հետ իրականացված խորհրդատվական աշխատանքներն արդյունավետ են եղել. վերջիններս կարողացել են իրենց խնդիրները մասամբ կամ ամբողջապես հաղթահարել (հիմք՝ խորհրդատվական կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը):

3. 2018թ. համար պլանավորված աշխատանքները, որոնք չեն կատարվել:

- Մշակվել է «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» ՄԿԾ-ն, որը դեռևս ներդրված չէ, քանի որ այդ մասնագիտությամբ ընդունելություն չի կատարվել:
- Շրջանավարտներին աշխատանքի տեղավորման և անհրաժեշտ վերաորակավորման ուղիների վերաբերյալ խորհրդատվություն մասամբ է տրամադրվել, քանի որ կարիերայի կենտրոնի հետ աշխատանքների հստակ մեխանիզմներ մշակված չեն:

4. SWOT վերլուծություն ստորաբաժանման աշխատանքների վերաբերյալ:

Ուժեղ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. Ամբիոնների կողմից կազմված Մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են բուհի առաքելությանը և շարունակական զարգացման ծրագրին և համահունչ են ՈԱ մեխանիզմներին և պահանջներին:</p> <p>2. Բուհում գործում են ՈԱ մի շարք ընթացակարգեր, որոնք միտված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:</p> <p>3. ՄԿԾ-ների մշակումն իրականացվել է մասնակցային սկզբունքով: Այս գործընթացում ներգրավվել են համապատասխան արտաքին և ներքին շահառուներ:</p> <p>4. ՄԿԾ-ների որակի վերաբերյալ հետադարձ կապի մեխանիզմի առկայությունը նպաստում է ՄԿԾ-ի նպատակների և գործընթացների բարելավմանը:</p>	<p>1. ՄԿԾ-ների իրականացման ՈԱ չափանիշների մասին պրոֆեսորադասախոսական կազմի ոչ լիարժեք իրազեկություն:</p> <p>2. Չնայած ՄԿԾ-ները պարբերաբար վերանայվում են սահմանված ընթացակարգով, սակայն դրա իրականացման արդյունավետության գնահատման մեխանիզմները մշակման կարիք ունեն:</p>

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<p>1. Բուհում գործող ՈԱ ընթացակարգերը կնպաստեն ուսումնական ծրագրի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:</p>	<p>1.ՄԿԾ-ների իրականացման ՈԱ չափանիշների մասին պրոֆեսորադասախոսական կազմի ոչ լիարժեք իրազեկությունը թուլացնում է ՈԱ գործընթացի հիմքերը և այն դարձնում դժվար կառավարելի: 2.ՄԿԾ-ների պարբերաբար վերանայման և նրա արդյունավետության գնահատման մեխանիզմների թերի լինելը կհանգեցնի նրա վերջնարդյունքների լիարժեք ձևավորման անհնարինությանը:</p>

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ միտումները կբխեն 2018 թ. ներկայացվելիք « Մանկավարժության ֆակուլտետի ռազմավարության» դրույթներից, և ստորաբաժանման կողմից իրականացվելիք աշխատանքների ցանկը կհամապատասխանեցվի ռազմավարությանը (անդրադառնալով ինչու՞, ինչպե՞ս, մարդկային ի՞նչ ռեսուրսներով, ի՞նչ միջոցներով, ու՞մ պատասխանատվությամբ, ինչ՞ վերջնական արդյունքով հարցերին):

Մանկավարժության ֆակուլտետի՝ առաջիկայում ներկայացվելիք ռազմավարության ներդրմամբ կվերանայվեն և կբարելավվեն արդեն ներդրված ՄԿԾ-ները: Դրանց կատարելագործման սկնկայիքով պլանավորվում է համագործակցել նույն մասնագիտություններով բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ, վերհանել թերություններն ու բացթողումները և կատարել համապատասխան շտկումներ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
Կրթական գործունեություն						
1. Ուսումնական գործընթացի կատարելագործում	<p>1. Ուսուցման մեջ նորարարական տեխնոլոգիաների և մոտեցումնարի ներդրում:</p> <p>2. Ուսումնական գործընթացն ապահովող ուսումնամեթոդական նյութերի ամբողջական բազայի ստեղծում:</p> <p>3. Մանկավարժության և հոգեբանության կաբինետի գրականության համալրում:</p> <p>4. Հոգեբանական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներ:</p>	1. Դեկան 1. Ամբիոնների դասախոսներ	1. Կաբինետի վարիչ	2015-2018	Ուսանողա-կենտրոն կրթական միջավայրի ձևավորում:	Դիպլոմի հավելվածի միջազգային ճանաչման իրականացում

Գիտահետազոտական						
1.Դասախոսների գիտահետազոտական գործունեության ակտիվացում	1.Դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում: 2. Դասախոսների մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում: 3.Ամբիոնների մասնագիտացման ուղղությունների շրջանակներում գիտական և կիրառական հետազոտությունների զարգացում: 4.Գիտական զեկուցումներ կոնֆերանսներում	1.Ամբիոնների վարիչներ	1.Դեկան 2.Ամբիոններ	2015-2018	1.Գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճի ապահովում: 2.Երիտասարդ կադրերի ներհույս գիտության ոլորտ:	1.Գիտության ոլորտի գիտական անկախ փորձաքննության ապահովում: 2. Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում:
2.Ուսանողների ընդգրկում ամբիոնի գիտահետազոտական գործունեության	1.Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպում՝ ներառելով գիտական,	1.Դեկան 2.Ամբիոնների դասախոսներ	Ֆակուլտետների և հանրապետության մյուս բուհերի ՈԻԳԸ-ների միջև	2015-2018 ապրիլ 2018թ. (արվեստի, մանկավար-	1.Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ներգրավում	1. Ուսանողների թվաքանակի նվազում: 2. Ուսանողների համար գիտական

մեջ	ուսումնա-կան և մասնագիտական ուղղությունը: 2. ՈՒԳԸ՝ ամենամյա ուսանողական գիտական կոնֆերանսի անցկացում ժամանակակից հոգեբանության, մանկավարժության հիմնախնդիրների թեմաներով:			Ժության, հոգեբանության ամբիոն),	գիտահետազոտական աշխատանքներում: 2. Ուսանողական գիտական աշխատանքների արդյունքների դուրսբերում արտաքին միջավայր: 3. Ուսանողների ներգրավվածություն գիտաժողովների, սեմինարների:	գործունեության ոչ գրավիչ դիրք՝ պայմանավորված ցածր վարձատրությամբ:
Սոցիալ- դաստիարակչական գործունեություն						
1.Ֆակուլտետում ակադեմիական խորհրդատվական ինստիտուտի կատարելագործում :	1. Ակադեմիական խորհրդատուների աշխատանքների ծրագրերի և պլանների մշակում:	1. Ակադեմիական խորհրդատուներ	1.Դեկան	2015-2018	Ուսանողների դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության դերի բարձրացում, նրանց կողմից համամարդկային արժեքների կյարևորում:	

2.Ուսանողների համակողմանի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում:	1.Բարոյական, գեղագիտական, հայրենասիրական զգացմունքների ձևավորմանն ուղղված տարատեսակ միջոցառումների կազմակերպում և անցկացում:	1.Դեկան 2.Ամբիոնների դասախոսներ	1.Ուսխորհուրդ 2.Արհկոմի նախագահ	2015-2018	Ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության համար տեխնոլոգիաների մատչելի պայմանների ապահովում:	
Որակի ապահովում						
1.Մատուցվող կրթական ծառայության կատարելագործում : 2.Աջակցություն մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխան եց- նելու գործընթացին:	1.Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացում, դրանց իրականացման խթանում և ուղղորդում դեպի որակի ապահովման եվրոպական չափանիշներ: 2.Դասախոսական կազմի կոմպետենտության բարձրացում: 3.Արտաքին շահառուների ընդգրկումը ավարտական պետական	Ամբիոնների վարիչներ և դասախոսներ	1.Դեկանատ 2. Որակի ապահովման կենտրոն	2015-2018	Մասնագիտական կրթության մատչելիության և իրականացման թափանցիկության ապահովում:	Շահակիցների հետ սերտ համագործակցության բացակայություն:

	քննությունների հանձնաժողովներում: 4. Ուսանողների կրթական կարիքների վերհանում և դրանց լուծման ուղիների մշակում:					
Արտաքին կապեր և միջազգայնացում						
1.Սպասարկող ամբիոնների՝ որպես ուսումնական և գիտական կառույցների հեղինակության բարձրացում արտաքին միջավայրում:	1.Մասնակցություն միջազգային, հանրապետական, մարզային նորարարական ծրագրերին և նախագծերին, արտասահմանյան բուհերում անցկացվող միջազգային գիտագործնական գիտաժողովներին և կոնֆերանսներին:	Ամբիոնների դասախոսներ	1.Դեկան 2. Արտաքին կապերի բաժին	2015-2018	Ֆակուլտետի կրթական ծառայությունների ապահովմամբ աշխատաշուկայում, ամբիոն-ների միջազգային հեղինակության բարձրացում, միջազգային ծրագրերի ակտիվ մասնակցություն:	Գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերից օգտվելու համար գիտափորձարարական լաբորատորիաների և նյութատեխնիկական բազայի պայմանների սղություն:
Կարիերայի և շրջանավարտներին աջակցություն						
1.Աշխատաշուկայի և անհրաժեշտ որակյալ	1. Շրջանավարտներին աշխատանքի տեղավորման և	1.Դեկան 2.Ամբիոնների դասախոսներ	1.Կարիերայի կենտրոն 2.Շահառուներ	2015-2018 (շարունակաբար)	Մասնագետների որակավորման բարձրացում և	Լոռու մարզում կրթական ծառայությունների և

<p>կրթությամբ մասնագետների պատրաստում: 2.Շրջանավարտների մասնագիտական կարիերային աջակցություն:</p>	<p>անհրաժեշտ վերաորակավորման ուղիների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում: 2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում: 3. Շրջանավարտներին մեթոդական աջակցության ցուցաբերում: 4. Գործատուների և շրջանավարտների հանդիպումների կազմակերպում:</p>		<p>3.Գործատուներ</p>		<p>վերավարկավորում:</p>	<p>աշխատաշուկայի ներկա իրավիճակի ու զարգացման ուղղությունների մշտադիտարկման բացակայություն:</p>
<p>Հասարակության հետ կապերի զարգացում</p>						
<p>1.«Բուհ-դպրոց կապ»-ի ընդլայնում և ամրացում: 2.Հանրության իրազեկում մանկավարժության, հոգեբանության, արվեստի ամբիոններում</p>	<p>1.Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների հետ: 2.«Բաց դռների օրերի»</p>	<p>1.Դեկան 2. Ամբիոնների վարիչներ և դասախոսներ</p>	<p>1.Մարզի դպրոցների, միջին մասնագիտա-կան հաստատությունների ղեկավարներ: 2.Մշակույթի կենտրոն:</p>	<p>2015-2018 (շարունակաբար)</p>	<p>1. Հասարակության հետ կապի ապահովում: 2. Հանրության շրջանում համալսարանի հեղինակության աճի բարձրացում: 3.Հանրային կարիքների և</p>	<p>Շահառուների և շրջանավարտների փոխադարձ կապի ապահովում:</p>

<p>կազմակերպվող կրթական, գիտական և մշակութային գործընթացների մասին:</p>	<p>անցկացում: 3. Ամբիոնների շնորհանդեսների անցկացում դպրոցներում: 4. Դիմորդներին հոգեբանամանկավարժա-կան խորհրդատվության անցկացում: 5. Դիմորդների հետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում:</p>				<p>աշխատաշուկայի պահանջների վերհանում:</p>	
---	--	--	--	--	--	--

Հավելվածներ-1

1. Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հարցեր

Մանկավարժության ամբիոնում անհատական և ինքնուրույն աշխատանքներն ընթանում են կազմակերպված: Բոլոր դասախոսները ներկայացրել են ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և գնահատման ժամանակացույց:

Անհատական աշխատանքների համար ամբիոնում կա հատուկ գրանցման մատյան, որտեղ գրանցումը կատարում են ուսանողները և ստորագրում (մինչ օրս կատարվել է 94 գրառում): Ամբիոնը մշակել է ինքնուրույն աշխատանքների կազմակերպման մեթոդիկա, ինչը տրամադրել է նաև համալսարանի ստորաբաժանումներին (դեկանատներ, ամբիոններ):

Անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հարցերը զտնվում են նաև հոգեբանության ամբիոնի ուշադրության կենտրոնում: Ամբիոնում պահվում է անհատական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ գրանցման մատյան, հատկապես այդ աշխատանքները ավելի ինտենսիվ են առկա և հեռակա բաժինների չառաջադիմող ուսանողների հետ, կազմված է համապատասխան գրաֆիկ ըստ դասախոսների, որի համաձայն կատարվում են այդ աշխատանքները:

Ինքնուրույն աշխատանքները հանձնարարվում են ուսանողներին հատկապես արդիական, առանցքային թեմաներից: Յուրաքանչյուր ուսանող կիսամյակի ընթացքում ներկայացնում է երկուսից երեք ինքնուրույն աշխատանք, որոնք գնահատվում են ըստ արժանվույն՝ նշելով առավելությունները և թերությունները, բացթողումները, բացի դրանից դասախոսների կողմից կազմված է իրենց կողմից կատարվող ինքնուրույն աշխատանքների գրաֆիկ:

Արվեստի ամբիոնում ինքնուրույն աշխատանքները <<Երաժշտական կրթություն>> և <<Կերպարվեստ>> բաժիններում կազմակերպվում են ըստ մասնագիտությունների և դասավանդվող առարկաների առանձնահատկությունների: <<Երաժշտական կրթություն>> մասնագիտությամբ երաժշտատեսական առարկաներից ինքնուրույն աշխատանքները հանձնարարվում են տվյալ թեմային համապատասխանող տնային աշխատանքների, մշակումների, ուսումնասիրվող ստեղծագործություններից առանձին հատվածների վերլուծության, հարմոնիկ

խնդիրների լուծման, նոտային օրինակների ուսուցման և վերլուծության ձևով:
<<Երաժշտության պատմություն>> առարկայից հանձնարարվում են նաև
ռեֆերատներ կոմպոզիտորների կյանքի և գործունեության վերաբերյալ:

<<Խմբավարություն և պարտընթերցում>> առարկայից ինքնուրույն աշխատանքների
ձևով հանձնարարվում է խմբերգային որևէ ստեղծագործության վերլուծություն
(անոտացիա)՝ ընդգրկելով հեղինակի մասին տեղեկություններ:

<<Հիմնական նվագարան>> և <<Ձայնադրում>> առարկաների ինքնուրույն
աշխատանքների համար ընտրվում են յուրաքանչյուր կիսամյակում երկուական
ստեղծագործություն ինքնուրույն ուսուցման և վերլուծության համար,
հանձնարարվող ստեղծագործություններն ընտրվում են ըստ ուսանողների
ընդունակությունների և կարողությունների:

<<Կերպարվեստ>> մասնագիտության մասնագիտական առարկաներից
ինքնուրույն աշխատանքները հանձնարարվում են օրացուցային պլանին
համապատասխան տնային աշխատանքների ձևով, որոնք ստուգվում և գնահատվում
են լսարանում:

<<Արվեստի պատմություն>> և <<Կերպարվեստի դասավանդման տեխնոլոգիա և
մեթոդիկա>> առարկաներից հանձնարարվում են մշակումներ, ռեֆերատներ
դասավանդվող թեմաների վերաբերյալ:

2. Դասախոսական տեքստերի լսում և քննարկում

Մանկավարժության ամբիոնը պարբերաբար իրականացնում է դասախոսական
տեքստերի լսում և քննարկում: Այս ուսումնական տարում բոլոր դասախոսներն
ամբիոն են ներկայացրել մեկական դասախոսական տեքստ, որոնք ուսումնասիրվում
են ամբիոնի վարիչի կողմից:

Հոգեբանության դասախոսական տեքստերը ամբիոնի դասախոսների կողմից
անընդհատ թարմացվում և նորացվում են: «Հոգեբանություն» մասնագիտության հետ
կապված մշակվել են նոր դասընթացների դասախոսական տեքստեր, որոշ
առանցքային թեմաներ դասախոսների՝ հատկապես երիտասարդ դասախոսների
կողմից ներկայացվում են ամբիոնի նիստերում և քննարկման առարկա դառնում
ամբիոնի դասախոսների կողմից, այսպես՝ Մ. Չատինյանի «Շեղվող վարք» առարկայի
դասախոսական տեքստի քննարկում:

Արվեստի ամբիոնում Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների իրականացման և համալսարանի հավատարմագրման նպատակով վերանայվել են «Կերպարվեստ» և «Երաժշտական կրթություն» մասնագիտությունների մասնագիտական կրթական ծրագրերը: Մատուցվող կրթական ծառայությունների կատարելագործման և որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով վերանայվել են բնութագրիչները, առարկաների վերջնարդյունքները, ամփոփիչ ատեստավորման պահանջները:

Արվեստի ամբիոնում կամրնտրական դասընթացներ են կազմակերպված նշված առարկաներից.

- «Ժամանակակից երաժշտական ուղղություններ» - Հ. Հակոբյան
- ԴԿԱ/«Գործվածքի դիզայն» - Ա. Հոհվաննիսյան
- «Ժամանակակից արվեստի պատմություն» - Ա. Հովհաննիսյան
- «Երգչախմբի հետ աշխատանքի դասավանդման մեթոդիկա»Ռ.

Ամիրբեկյան

- «Կավագործություն» - Ռ. Հեքիմյան
- «Խեցեգործություն» -Ռ. Հեքիմյան
- «Համաշխարհային մշակույթի պատմություն»(վոկալ) Հ. Հակոբյան

Նշված առարկաներից կազմվել են առարկայական ծրագրեր, ուսումնամեթոդական փաթեթներ և ներկայացվել ամբիոնի քննարկման և հաստատման: Ամբիոնի աշխատակիցներին հանձնարարվել են կազմել և վերանայել միջանկյալ, ամփոփիչ քննությունների և ստուգարքների բոլոր հարցաշարերը, թեստային առաջադրանքները, հարցատոմսերը: Նոյեմբերի 30-ին տեղի ունեցած թիվ 4 ամբիոնի նիստում քննարկվել և հաստատվել են նշված հարցաշարերը, թեստային առաջադրանքները, հարցատոմսերը:

2. Արդիական թեմաների շուրջ սեմինարների կազմակերպում

Մանկավարժության ամբիոնում գործում է տեսամեթոդական սեմինար, որտեղ քննարկվում են ինչպես տեսական, այնպես էլ մեթոդական հարցեր: Հատկապես ուշադրություն է դարձվում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմանը ուսուցման գործընթացում:

Հոգեբանության ամբիոնի նիստերում դասախոսների կողմից ներկայացվում են «Հոգեբանություն», «Սոցիոլոգիա» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների հետ կապված սեմինար պարապմունքներ արդիական թեմաներով, հատկապես շեշտը դրվում է բուհական հոգեբանության, ուսանողների հոգեբանական անվտանգության հիմնախնդիրների վրա:

4. Մագիստրոսական թեզերի թեմաների առնչությունը ամբիոններին

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները հիմնականում կապված են հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի «Ուսանող - դասախոս հարաբերությունների հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» և «Ուսանողների հոգեբանական անվտանգությունը որպես բուհական հոգեբանության հիմնախնդիր» հետազոտական ուղղությունների հետ: օր.՝ «Առաջին կուրսեցիների սթրեսների տեսակները, պատճառները և կանխարգելման ուղիները» (ղեկ. Ռ. Ավագիմյան): Այժմ «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 7 ուսանողներ ավարտական մագիստրոսական թեզեր են գրում «Հոգեբանություն» առարկայից:

Մանկավարժության ամբիոնն ունեցել է 1 մագիստրոս, որի թեզի թեման հնարավորինս համապատասխանեցված էր մեր ամբիոնի գիտական ուղղությանը.

1. Դասարանի ղեկավարը՝ որպես ավագ դպրոցականի բարոյական արժեքների ձևավորման գործընթացի կառավարիչ (ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Ս. Բեժանյան): Այժմ «Կրթության կառավարում» մագիստրատուրայի 2 ուսանողներ ավարտական մագիստրոսական թեզեր են գրում մանկավարժությունից:

5. Մատենավարությանն ու գնահատմանն առնչվող հարցեր:

Պարբերաբար վերահսկվում է մատենավարության գործընթացը խորհրդատուների, վերջիններիս աշխատանքն էլ՝ դեկանի կողմից: Արդյունքում նկատված թերություններն աստիճանաբար շտկվում են, սակայն դեռևս որոշ դասախոսների մոտ նկատելի են: Գրանցումները կատարվում են ըստ կանոնակարգի, բայց որոշ դասախոսների մոտ գործնական պարապմունքների գնահատումները թերի են, դասի ժամանակ չեն կարողանում ընդգրկել մեծ թվով ուսանողներ: Ինքնուրույն աշխատանքների գնահատումները որոշ առարկաների գծով մատյաններում պակասում են: Մատյանների վարման պահանջների մեջ

ավելացել են նոր ենթակետեր (ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփումը , ուսանողների բացակայություններն ըստ շաբաթների՝ փակագծերում հարգելի բացակայությունների նշումով): Նման վիճակագրությամբ ավելի օբյեկտիվ է դառնում ուսանողների վերջնական գնահատումը: Ֆակուլտետի խորհրդատուները չնչին բացառությամբ կատարում են հիշյալ գրանցումները:

Որոշ դասախոսներ առաջարկում են հստակեցնել գնահատման չափանիշները:

Հավելվածներ-2

Ֆակուլտետի առաջադիմությունը 2018 թ.-ին

Ֆակուլտետի առկա ուսուցմա համակարգի 2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի առաջադիմությունը եղել է 85%, հեռակա բաժնի 1-ին կիսամյակում՝ 82%:

Առկա համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի համապատասխան բաժիններում ըստ ՄՈԳ-ի տվյալների գերազանց առաջադիմություն են ունեցել 166 ուսանողներ:

1. Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/ - 139 ուսանողներ, 45-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

2. Հոգեբանություն - 71 ուսանողներ, 36-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

3. Մանկավարժություն և հոգեբանություն- 27 ուսանողներ, 11-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

4. Սոցիալական մանկավարժություն - 92 ուսանողներ, 42-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

5. Կերպարվեստ - 14 ուսանողներ, 12-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

6. Երաժշտական կրթություն - 10 ուսանողներ, 7-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

7. Կրթության կառավարում (մագիստրատուրա) - 6 ուսանողներ, 5-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

8. Հոգեբանություն (մագիստրատուրա) - 11 ուսանողներ, 8-ը՝ գերազանց առաջադիմությամբ:

Ըստ ՄՈԳ-ի բանաձևի հաշվարկների՝ բակալավրիատից 20 ուսանող ստացան գերազանցության դիպլոմ, իսկ մագիստրատուրայից՝ 4 ուսանող:

Հեռակա համակարգի բակալավրիատի համապատասխան բաժիններում ըստ ՄՈԳ-ի տվյալների գերազանց առաջադիմություն են ունեցել 30 ուսանողներ:

1. Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/ - 131 ուսանողներ, 12-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

2. Հոգեբանություն - 28 ուսանողներ, 4-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

3. Մանկավարժություն և հոգեբանություն- 46 ուսանողներ, 3-ը՝ գերազանց առաջադիմությամբ,

4. Սոցիալական մանկավարժություն - 95 ուսանողներ, 11-ը՝ գերազանց առաջադիմությամբ:

Հավելվածներ – 3

2018 թ.-ին գիտաժողովների մասնակցած ուսանողների ցուցակ

Հակոբջանյան Ջավահիր	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՉԱՌԱՋԱԴԻՄԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՇՏԿՈՒՄՆԵՐԸ»	Գիտ. դեկ.՝ մ.գ.թ.դոցենտ Ա.Հովհաննիսյան	Տպագրման փուլում
Գրիգորյան Ջարինե	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ՎԱԽԵՐԸ»	Գիտ. դեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Բ.Վիրաբյան	Տպագրման փուլում
Շուշան Քամայան	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»	Գիտ. դեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Լիզա Հարոյան	Տպագրման փուլում
Խումարյան Լիլիթ	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ»	Գիտ. դեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Լ.Հարոյան	Տպագրման փուլում
Գալստյան Հասմիկ	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱԳԻՐ»	Գիտ. դեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Լ.Հարոյան	Տպագրման փուլում
Տոնոյան Տաթևիկ	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ և ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ»	Գիտ. դեկ.՝ Է. Նասիլյան	Տպագրման փուլում
Վերանյան Լիլիթ	20.03.2018թ.	ՎՊՀ	Ֆակուլտետային գիտաժողով	«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ»	Գիտ. դեկ.՝ հ.գ.թ., դոցենտ Վ. Միրզոյան	Տպագրման փուլում

Մարինա Մեսրոպյան	16.04.2018-20.04.2018 թ.	ԵՊՀ	Միջազգային գիտաժողով	ՀՈՒՅՁԵՐԻ ԴՐՄԵՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԵՐՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. Տ. Մալուխյան	Տպագրման փուլում
Դիանա Մաթոսյան	16.04.2018-20.04.2018 թ.	ԵՊՀ	Միջազգային գիտաժողով	ՊԵՐՖԵԿՑԻՈՆԻԶՄԸ ՈՐՊԵՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՈՒՅԹ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Վ. Միրզոյան	Տպագրման փուլում
Լիլիթ Վերանյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԻԱՆՔՆԵՐԸ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Վ. Միրզոյան	Գրախոսման փուլում
Արմինե Շախկյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Մանե Զաղացյանյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Մ. Մազմանյան	Գրախոսման փուլում
Մերի Զնայան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Արփինե Մկրտչյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական	ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ՎԱԽԵՐԻ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ.	Գրախոսման փուլում

			գիտաժողով	ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	դոցենտ Լ. Մարգարյան	
Զարինե Գրիգորյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՎԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ՎԱԽԵՐԸ	Գիտ. դեկավար՝ մ.գ.թ. դոցենտ Ք. Վիրաբյան	Գրախոսման փուլում
Զավահիր Հակոբջանյան	05.06.2018 թ.	ՇՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՏ ՄՆԱԼՈՒ ԵՎ ՉԱՌԱՋԱԴԻՄԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ԴՐԱ ՇՏԿՈՒԸ	Գիտ. դեկավար՝ մ.գ.թ. դոցենտ Ա. Հովհաննիսյան	Գրախոսման փուլում
Լիլիթ Վերանյան	26.10.2018-27.10.2018 թ.	ՇՊՀ	Միջազգային գիտաժողով	ՀՈՒՄՈՐԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՆՈՒՅԹ և ԴՐԱ ԴԵՐԸ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	Գիտ. դեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Վ. Միրզոյան	Գրախոսման փուլում
Արմինե Շախկյան	26.10.2018-27.10.2018 թ.	ՇՊՀ	Միջազգային գիտաժողով	ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ և ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ	Գիտ. դեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Լիանա Միրզոյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ՎԱՂ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	Գիտ. դեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Հ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Արփինե	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական	ՎԱԽԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ	Գիտ.	Գրախոսման

Մկրտչյան			ուսանողական գիտաժողով	ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	ղեկավար՝ հ.գ.թ. դրոցենտ Լ. Մարգարյան	փուլում
Մարիա Հովհաննիսյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՄԱՔԻԱՎԵԼԼԻԶՄԻ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՈՏ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. Տ. Մալումյան	Գրախոսման փուլում
Գուրգեն Մադոյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՈՍՏԻԿԱՆԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դրոցենտ Հ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Նարինե Հակոբյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՄՏԱՊԱՀՄԱՆ և ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դրոցենտ Մ. Մազմանյան	Գրախոսման փուլում
Էթերի Պողոսյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դրոցենտ Հ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Մանե	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական	ԿԱՐՃԱՏԵԿ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ	Գիտ.	Գրախոսման

Մարտիրոսյան			ուսանողական գիտաժողով	ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ	ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Մ. Մազմանյան	փուլում
Արմինե Շախկյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Գրախոսման փուլում
Լիլիթ Վերանյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ ԵՎ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Վ. Միրզոյան	Գրախոսման փուլում
Հրաչուհի Մաթոսյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ	Գիտ. ղեկավար՝ մ.գ.թ. դոցենտ Ս. Բեժանյան	Գրախոսման փուլում
Հասմիկ Մազոյան	06.11.2018 թ.	ՎՊՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ	Գիտ. ղեկավար՝ մ.գ.թ. դոցենտ Ս. Բեժանյան	Գրախոսման փուլում
Արմինե Շախկյան	13.11.2018 թ.	ԵՊՀ	Հանրապետական գիտաժողով	ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԲՅԵԿՏ, ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ	Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Գրախոսման փուլում

Լիլիթ Վերանյան	04.12.2018 թ.	ՀՌՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ՀՈՒՄՈՐԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ և ԴՐԱ ԿԱՊԸ ԱՆՁԻ ՍԹՐԵՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ	Համահեղինակ՝ հ.գ.թ. դոցենտ Վ. Միրզոյան	Տպագրման փուլում
Արմինե Շախկյան	04.12.2018 թ.	ՀՌՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԷՄՊԱՏԻԱՆ ՈՐՊԵՍ ԴԵՌԱՀԱՍԻ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՔԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ	Համահեղինակ՝ հ.գ.թ. դոցենտ Ռ. Ավագիմյան	Տպագրման փուլում
Զավահիր Հակոբջանյան	04.12.2018 թ.	ՀՌՀ	Հանրապետական ուսանողական գիտաժողով	ԴԻՒԱՆՏ ՎԱՐՔԱԳԾՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ և ՆՐԱՆՑ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ		Տպագրման փուլում

«Կերպարվեստ» 4-րդ կուրս	19.09.2018թ.	Քաղաքի նկարիչների ցուցահանդես
Միրզոյան Աննա	10.10.2018թ.	Միջազգային ցուցահանդես-մրցույթ, Լեհաստան, Սոկոլո
Խաչատրյան Արզիմա	06.11.2018	Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100ամյակին նվիրված ուսանողական կոնֆերանս
Հայրապետյան Վիրաբ, Գրիգորյան Մարինե, Թորոսյան Աննա, Խաչատրյան Արզիմա	23.11.2018	«Նկարիչների օրվան» նվիրված ցուցահանդես ՎՊՀ-ում
Հովսեփյան Ռիմա	12.10.2018	Մարզային երաժշտական փառատոն
ՎՊՀ-ի «Բիայնա» երգչախումբ	8.12.2018	«Երգչախումբային արվեստի փառատոն» ղեկ.՝ Ս. Հարությունյան
Արվեստի ամբիոնի երաժշտության բաժնի երգչախումբ	8.12.2018	«Երգչախումբային արվեստի փառատոն» ղեկ.՝ Ռ. Ամիրբեկյան

Հավելվածներ – 4

2018թ.-ին անցկացված միջոցառումներ.

հունվարի 24 - «Փոքրիկին զբաղեցնելու հնարները ըստ Սոնտեստրի մեթոդների» սեմինար-քննարկում հեռակա համակարգում

հունվարի 30 – այցելություն «Օրբան»

փետրվարի 17 – այց վարպետ Բոգդանի արվեստանոց

մարտի 21 - «Ֆակուլտետի օր» միջոցառում

մարտի 30 - «Մայրս» խորագրով միջոցառում Լոռու մարզային գրադարանում

Մեպտեմբերի 21- Հայաստանի Հանրապետության անկախության 27-ամյակը

Մեպտեմբերի 30-ին մանկավարժության ֆակուլտետի դեկան Թերեզա Շահվերդյանի և նույն ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեց էքսկուրսիա դեպի Հաղարծնի վանք,որին ներկա էր նաև մանկավարժության ֆակուլտետի դասախոս Անահիտ Հովհաննիսյանը:

Հոկտեմբերի 2- Սոցիալական մանկավարժի մասնագիտական տոն:

Հոկտեմբերի 11- Այց Վանաձորի «Ծերերի տուն» ինտերնատ:

Նոյեմբերի 19-ին Վանաձորի պետական համալսարանում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված ստուգման գրքույկների հանձնմանը առաջին կուրսեցիներին:

Նոյեմբերի 20 - Միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ մրցույթ:

Նոյեմբերի 23 - Նկարչի մասնագիտական տոն:

Նոյեմբերի 26 - Հոգեբանի օրվան նվիրված՝ մանկավարժության ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ «Հոգեբանություն» բաժնի ուսանողները այցելեցին Սպիտակի «Խնամքի տուն»:

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝

Թ.Ս. Շահվերդյան

14.12.2018թ.

